



KOMITAS
SALON FUNÉRAIRE
Entrusted for over 25 years

Journey Home™ coverage included with new pre-arrangement contracts* (\$565 value)

www.komitas.ca   (514) 331-0400

Վանաձորի մէջ սկիզբ առաւ ՀՅԴ Գանատայի Երիտասարդական Միութեան պատանեկան ճամբարը




2011 թուականին, Վանաձոր քաղաքին մէջ կայացաւ Հայ Յեղափոխական Դաշնակցութեան Գանատայի Երիտասարդական Միութեան (ԳԵՄ) պատանեկան առաջին ճամբարը: Յաջորդող տարիներուն ճամբարի ծրագիրը շարունակուեցաւ, որպէս ԳԵՄ-ի հայրենի ծրագիր: Այս ճամբարներուն ծրագիրները կ'ընդգրկեն Դաշնակցութեան եւ Հայ Դատի պատմութիւն, Արցախի Ազատագրական Պայքարի պատմութիւն, հայրենասիրական երգերու ուսուցում, անգլերէնի եւ համակարգիչի դասընթացքներ, մարմնակրթական եւ ուսուցողական խաղեր:

Այս տարի, որպէս վարիչ ճամբարին կը մասնակցին Գանատայի Երիտասարդական Միութեան 10 անդամներ, որոնք հայրենի նորահաս սերունդը ազգային գաղափարախօսութեամբ թրծելու յանձնառութիւնը ստանձնած՝ կը գտնուին հայրենիք: Ընթացքին կը մասնակցին 200 պատանիներ:

Անցնող տարիներուն, ՀՅԴ Գանատայի Երիտասարդականի անդամ աւելի քան հարիւր պատասխանատու-վարիչներ գործուղուած են Լոռիի մարզ, եւ նոյն այդ ժամանակահատուածին երկու հազար երեխաներ մասնակից դարձած են ՀՅԴ ԳԵՄ-ի ամառային ճամբարներու ծրագիրներուն:

Հայ մարմնամարզիկ Արթուր Դաւիթեան Փարիզի Ոլիմպիական խաղերուն արծաթեայ մետալի կ'արժանանայ



Փարիզի մէջ տեղի ունեցող 2024-ի Ոլիմպիական խաղերուն ընթացքին հայ մարմնամարզիկ Արթուր Դաւիթեան կը նուաճէ արծաթեայ մետալ, որով կը հանդիսանայ 2024-ի Ոլիմպիական խաղերուն առաջին հայ մետալակիրը:

Մեր նպատակն է՝ ամէն ջանք գործադրել, որպէսզի արցախցին մնայ Հայաստան. ՀՕՄ-ի Հայաստանի Երջ. վրջ. ատենապետ Մարո Քեշիշեան



Կարդալ էջ 4

MAZDA GABRIEL ANJOU

THE ALL-NEW 2024 MAZDA CX-50

Kevork Asadourian
General Manager

7050, boul. Henri-Bourassa Est
Anjou, QC H1E 7K7
Tél. : 514 328-7777
mazdagabrielanjou.ca



Al-Nejmah

MIDDLE EASTERN SUPERMARKET

NOW OPEN
NOW OPEN



Սեփականատեր
Յարութ Միփան

Ընտանեկան բացառիկ գործառնություն
ուր կը գտնեք ձեր բոլոր կարիքները
ուտելիքներու վերաբերեալ

★ IN HOUSE

COFFEE ROASTING & GRINDING
ROASTING FRESH NUTS
SESAME GRINDING TO MAKE FRESH TAHINA
TANOOR BREAD & IRAQI SAMOON

Մուրճ աղալ եւ խարկել
Հնտեղին աղալ օրական դրութեամբ
Շուշմայ աղալ եւ թահինի պատրաստել
Թոնիքի հաց եւ իրաքեան սոմոն

Supermarket | Restaurant | Bakery | Halal Butcher
Վաճառատուն, ճաշարան, փուռ, մսավաճառ

PHONE: 289.232.1200
3085 Hurontario St, Unit 1-6, Mississauga



Քարտեազէտ Ռուրէն Գալշեանի նոր աշխատութեամբ բացայայտում եմ Ատրպէյճանի հնարած կեղծիքները

Մայրաքաղաք Երեւանում՝ Գիտութիւնների ազգային ակադեմիայում (ԳԱԱ) տեղի ունեցաւ աշխարհագրագէտ, քարտէսագէտ-քարտէսաբան Ռուբէն Գալշեանի՝ «Ատրպէյճանի 2014 թ. ազգային ատլասի «պատմական» քարտէսների քննութիւն եւ «Արեւմտեան Ատրպէյճան» յօրինուած եզրոյթը» երկրագոյ (Տայերէն եւ անգլերէն) գրքի շնորհանդէսը։ Գիրքը տպագրուել է «Գեղարզ» գիտավերլուծական հիմնադրամի ֆինանսական աջակցութեամբ։

Ատրպէյճանը 2014-ին հրատարակել էր 16 քիւրդամանոց պետական ատլասը։

Ռուբէն Գալշեանը դրա բնօրինակը դժուարութեամբ ձեռք է բերել ու սկսել ուսումնասիրել՝ բացայայտելով այն գեղծարարութիւնները, որոնք կատարել է Ատրպէյճանի այդ ատլասում։ Ատրպէյճանի պետական ատլասում վերահրատարակուել են հին ու հնագոյն քարտէսներ, սակայն, ի տարբերութիւն բնօրինակների, առանց «Արմենիա» անունը նշելու։

Գիրքը բաղկացած է երկու մասից։ Առաջին մասը վերաբերում է Պաքուում 2014 թ.-ին հրատարակուած Ազգային ատլասում կեղծուած քարտէսներին՝ դրանք դիտարկելով բնօրինակների հետ։ Երկրորդ մասը վերաբերում է Հայաստանի Հանրապետութեան տարածքն «Արեւմտեան Ատրպէյճան» ներկայացնող ատրպէյճանական կեղծարարութեանը։

Շնորհանդէսին ներկայ էին գրքի հեղինակ Ռուբէն Գալշեանը, «Գեղարզ» հիմնադրամի տնօրէն Ռուբինա Դազարեանը, ԳԱԱ պատմութեան ինստիտուտի տնօրէն, ակադեմիկոս Աշոտ Մելքոնեանը, ք.գ. դոկտոր Հրաչ Մարտիրոսեանը, ք.գ. դոկտոր, հնագէտ Համլէտ Պետրոսեանը եւ այլք։

Պատմութեան ինստիտուտի տնօրէն, գրքի պատասխանատու խմբագիր Աշոտ Մելքոնեանը խօսեց ատրպէյճանցիների կողմից տարածուող կեղծ, պատմական փաստերի հետ առնչութիւն չունեցող թեզերի մասին։ Նա յիշեցրեց, որ ատրպէյճանական պատմութիւնը կեղծելու հիմքը դրել է Զիա Բուրիաթովը։

Ռուբէն Գալշեանը ներկայացրեց գրքի բովանդակութիւնը. գրքում գետեղուած է երկու յօդուած՝ կապուած Ատրպէյճանի քարտէսագրական գեղծարարութիւնների հետ։ Առաջին յօդուածը վերաբերում է Ատրպէյճանում 2014 թ. Ազգային ատլասում օտար քարտէսագէտների կողմից կեղծուած քարտէսների քննարկմանը՝ դրանք դիտարկուած բնօրինակների հետ։

Երկրորդ յօդուածը նուիրուած է Հայաստանի Հանրապետութեան տարածքն «Արեւմտեան Ատրպէյճան» ներկայացնող ատրպէյճանական կեղծարարութեան բացայայտմանը։

«Ատրպէյճանական կեղծարարութիւնների դէմ եւ դրանց դիմագրուման ուղղութեամբ մեր հիմնադրամի, ակադեմիական ինստիտուտների, առանձին բուհական գիտաշխատողների կողմից տարուած են տարաբնոյթ աշխատանքներ, բայց այդ ամէնը բաւարար չէ։ Այս աշխատութեան հրատարակութիւնը կը լրացնի այդ աշխատանքներում առկայ բացերից մէկը։ Գրքի շնորհանդէսը նպատակ ու մեր ընդհանուր գործին», ասաց Ռուբինա Դազարեանը։

ԳԱԱ պատմութեան ինստիտուտի տնօրէն, ակադեմիկոս Աշոտ Մելքոնեանը շեշտեց՝ Ռուբէն Գալշեանն այնքան է խորացել ինդիւի մէջ՝ կատարելով վիթխարի աշխատանք, որ այսօր, երբ խօսում են քարտէսագիրների գործունէութեան մասին, բոլորը նախ մատնանշում են նրան։

Յասմիկ Բալէեան

Էջերն Անմահութեան. Յարութ Բանոյեան

«Էջերն անմահութեան»ը յօդուածներու շարք մըն է, որ կ'անմահացնէ յանուն հայրենիքի գաղափարին իրենց կեանքը զոհած մեր նուիրեալները։ Անոնք իւրաքանչիւրիս կը փոխանցեն առկախ կտակ մը եւ կը դառնան ներշնչարան՝ իւրաքանչիւր օր հայրենի ապրելու ու պայքարելու յանուն այդ կտակի ամբողջացման։

Բարոյական նկարագրի տէր, ազգանուէր, հայրենիքի գաղափարի նուիրեալ, մտաւորական, ռազմիկ, ընկերասէր, ՀԾԴ-ի եւ ՀՄԸՄ-ի անդամ, Արցախեան հերոս, հրամանատար Յարութ Բանոյեան ծնած է Հալէպ, 1976-ին։

«Եթէ թշնամին մտածի մեզ հարուած հասցնել, առաջին մայրը թող ըլլայ իմ մայրս, թող սեւ հագնի, քան թէ սեւ հագնին հայ ազգի բոլոր մայրերը»։

Յարութ իր ծնած օրէն տեղեակ էր իր արեան կանչին։ Անոր ընկերները կը վկայեն, որ մանկապարտէզի տարիներուն ուսուցիչները Յարութի պայուսակին մէջէն կը գտնեն դանակ մը, իսկ երբ հարց կու տան անոր, թէ ինչո՞ւ իրեն հետ դպրոց բերած է այդ դանակը, հազիւ 5-ամեայ կրտսեր պատանիին պատասխանը կ'ըլլայ այն, որ այդ դանակը բերած է այն համոզումով, որ եթէ թուրքերը յարձակին դպրոցին վրայ, պէտք է պատրաստ ըլլանք մենք մեզ պաշտպանելու եւ կռուելու թուրքերուն դէմ։

Հետագային, Արցախ ռազմական կեդրոնի մը մէջ յոյն այդ կռուելու եւ միշտ պատերազմի պատրաստ ըլլալու գաղափարէն մեկնած, կոչ կ'ուղղէ իր զինակից ընկերներուն. «Պատերազմը այն ժամանակ է, երբ ինքզի որոշում կու տաս, որ պատերազմի պիտի երթաս, ոչ թէ պատերազմի երթալէն ետք իմանաս, որ պատերազմի եկած ես»։

Սուրիոյ պատերազմին, Բաֆֆի Պէքաճեանի նահատակութենէն ետք, Յարութ Բանոյեան կը ստանձնէ Հալէպի հայահոծ թաղամասերու ինքնապաշտպանութեան հրամանատարութիւնը։ Յարութի զինակից ընկերները կը պատմեն, որ պատերազմի թէժ օրերուն, երբ հիւսիսային Սուրիոյ հայահոծ շրջանները ծանր հարուածներու տակ էին, Յարութ չ'ենթարկուիր հրամանին՝ ըսելով իր զինակից ընկերներուն, թէ ինք երդուած է, որ պիտի մնայ այնտեղ՝ պաշտպանելով հայահոծ շրջանները։ Մինչեւ իր զինակից ընկերներուն օգնութեան հասնիլը՝ ան կը մնայ պատնէշի վրայ, եւ Յարութին շնորհիւ է, որ այդ շրջանները այսօր կը մնան գործօն ու հայահոծ շրջաններ։

Յարութ՝ մերօրեայ Ղուլեանը, Բեկորի նման սէր ունէր զինագործութեան։ Բեկոր կը շինէր նունակներ ու գէնքեր, իսկ Յարութ 2016-ի քառօրեայ պատերազմէն ետք սկսաւ գործակցիլ Հայաստանի զինուած ուժերուն հետ՝ պատրաստելով հրթիռներ եւ հարուածային գէնքեր, որոնք կիրարկուեցան 2020-ի արցախեան

Հատ նրա՝ ատրպէյճանցիները չեն անդրադառնում դրանց, որովհետեւ այդ աշխատութիւնները գրուել են բարձր մակարդակով եւ պարունակում են անվիճելի պատմական փաստեր։ Աշոտ Մելքոնեանը բացատրեց՝ բնագաւառն ինքնին այնպիսին է, որ կեղծիք թոյլ տալը շատ դժուար է։ Աշխարհի տարբեր երկրներում, տարբեր տպարաններում տպագրուել են քարտէսներ, որոնց վրայ յստակ հայերէնով եւ այլ լեզուներով գրուած է Հայաստան, որը ջնջել հնարաւոր չէ։

«Բայց, երբ կեղծարարին վճարում են եւ քաղաքական առումով ուղղորդում, ապա նա փորձում է ինչ-որ ձեւ գտնել՝ ընդհուպ մինչեւ Հայաստան բառը քարտէսներից հանելով։ 2014 թուականին հրատարակուած Ատրպէյճանի պաշտօնական ատլասը բնականաբար պարունակում է կեղծիքներ։ Մեզ յաջողուեց այդ նիւթը ձեռք բերել եւ փոխանցել պարոն Գալշեանին, որն անմիջապէս արձագանգեց, եւ յղացաւ ատրպէյճանական պետական ատլասի վերաբերեալ աշխատանք գրելու գաղափարը։ Ծանաչելով Գալշեանին՝ կարող ենք ասել, որ նա չի շրջանցել իրականութիւնը, թոյլ չի տուել կեղծիքներ, որովհետեւ կոչուած է նման երեւոյթների դէմ պայքարելու համար։

Ատրպէյճանցիները հրաժարուած են բանավիճել Գալշեանի հետ, քանզի լաւ գիտակցում են, որ գործ կ'ունենան ճշմարտութեան հետ», ասաց Մելքոնեանը։

Իր խօսքում Ռուբէն Գալշեանը նշեց, որ ատրպէյճանցիները 2012 թուականին վերջին անգամ փորձել են Պրուքսիլում բանավիճել իր հետ՝ իր հեղինակած «Ատրպէյճանի հնարովի պատմութիւնը» գրքի կապակցութեամբ, սակայն բախուելով իրականութեանն ու անբեկանելի փաստարկներին՝ տեղի են տուել։

«Դրանից յետոյ ոչ ոք չհամարձակուեց առարկել ինձ կամ խօսել որեւէ բանի մասին, քանի որ ես իմ աշխատութիւններում անդրադարձել եմ օտար աղբիւրներին՝ յղում կատարելով այլազգի պատմաբանների ու գիտնականների աշխատութիւններին։ Հայկական փաստերի վրայ չեմ կեդրոնանում, որպէսզի չասեն, թէ կողմնակալ աշխատութիւններ եմ գրում։ Վկայակոչում եմ հիմնականում յունահռոմէական, լատինական, պարսկական, արաբական աղբիւրները, որոնց դէմ որեւէ առարկութիւն չունեն», մանրամասնեց Ռուբէն Գալշեանը։

Ատրպէյճանցիներն ազգային ատլասում կեղծել են բնագիր քարտէսներ. յունահռոմէական, եւրոպական, բոլոր քարտէսներից հանել են Հայաստան անունը։ Գրքի մի մասը յատկացրել են Ատրպէյճանը հնագոյն քարտէսներում ներկայացնելուն։ Սակայն Ատրպէյճանը որպէս երկիր հնագոյն քարտէսներում գոյութիւն չունի, այն եղել է Պարսկաստանի նահանգներից մէկը։ Արաքս գէտի հիւսիսային ափին երեք Ատրպէյճան անունով երկիր գոյութիւն չի ունեցել։

Հնագոյն քարէ քարտէսից մինչեւ 1918-ին օտար աղբիւրների հրապարակած փաստաթղթերում «Ատրպէյճան» եզրոյթն ընդհանրապէս գոյութիւն չի ունեցել։ Անգամ Օսմանեան կայսրութիւնում հրատարակուած 1913 թուականի բնօրինակ քարտէսում յստակօրէն նշուած է Հայաստանը։ Ատրպէյճանի հրատարակած Ատլասում կեղծուել են բոլոր բնօրինակ քարտէսները։

Հայ պատմաբանները վաղուց ծանօթ են թուրք-ատրպէյճանական գեղծարարութիւններին։ Դրանց դէմ պայքարն էլ նոր չէ ու շարունակուում է։ Այս աշխատանքը պէտք է շարունակել՝ ջանալով պայքարել ատրպէյճանական կեղծիք դէմ։

44-օրեայ պատերազմին։

Յարութ՝ մերօրեայ Վիգէնը, հայրենիքէն հեռու, սակայն հայրենիքը իր մէջ ծնած Վիգէնին նման շտապեց հայրենիք, ապա Շուշի։ Վիգէն նահատակուեցաւ Շուշիի ազատագրութեան սիրոյն, իսկ Յարութ նահատակուեցաւ պահպանելու համար ազատագրուած Շուշին։

Յարութ՝ մերօրեայ Պետօն, իր հայրենասիրութեամբ եւ համեստութեամբ ամէն ջանք ի գործ դրաւ ըլլալու համար թէ՛ ընկեր եւ թէ՛ հրամանատար։ Մարզեց պատերազմի ճակատ մեկնող զինուորները՝ զանոնք զինելով ռազմական գիտելիքներով եւ փոխանցելով իր հայրենասիրութեան ոգին ու նուիրութեամբ։ Յարութին ջանքերուն շնորհիւ է, որ շատ մը սահմաններ մնացին ամուր, եւ հետագային Արցախի մէջ ռազմական կեդրոն մը կոչուեցաւ իր յիշատակին։

«Հայրենիքը մեզի համար կ'մ մեր գերեզմանն է, կ'մ թշնամու գերեզմանն է»։

Յարութ՝ մերօրեայ Դուշմանը, իր սխրանքներով եւ փայլուն ռազմական միտքով թշնամիին մէծ կորուստներ պատճառեց՝ հայրենի հողը գերեզման դարձնելով հարիւրաւոր թշնամի զինուորներու։

«Այս ինքնաձիգը ինչպէս խաչն է,

Եթէ խաչը մեր փրկութիւնն է,

Հիմա ինքնաձիգը մեր փրկութիւնն է»։

Յարութին համար մեր ունեցած ուժը մեր կամքն է, մեր հաւատքը՝ Աստուծոյ, հայրենիքին եւ ժողովուրդին։ Ան կը հաւատար խաչին ու աստուածաբան ինքնաձիգին։ Ան յուսահատիլ չէր գիտեր, կը հաւատար՝ եթէ 10 հոգի ըլլանք եւ տասն ութը զոհուին, մնացած երկուքը բաւարար են շարունակելու պայքարը։ Յարութին համոզումով, եթէ օր մը մենք մեր հողերը կը կորսնցնենք, այդ մէկը պիտի ըլլայ ժամանակաւոր, որովհետեւ ան կուռ վատահոյսութիւն ունէր հայուն աննկուն կամքին նկատմամբ, եւ այն համոզումին, թէ այնքան ատեն որ ՀԱԹ-ը մարտունակ է պայքարելու ու կռուելու, այդ բռնագրուած հողերը կրկին պիտի ազատագրուին եւ կրկին պիտի մղուին «Հարսանիքը լեռներում»-ներ։

Շուշիի ինքնապաշտպանութեան օրհասական մարտերուն, 5 Նոյեմբեր 2020-ին արձուատար երեք դաշնակցականներ եւ ՀՄԸՄ-ականներ՝ Մոսիկ Սեքլեմեան, Յակոբ Աստարճեան եւ մերօրեայ հրամանատար՝ Յարութ Բանոյեան անցան ԷՋԵՐՆ ԱՆՄԱՀՈՒԹԵԱՆ։ Երեք հաւատարիմ ընկերները մաս կը կազմէին 10 հոգիէ բաղկացած ջոկատին, 8-ն մեկնեցան կուռի դաշտ՝ զոհուելով յանուն հայրենիքի պաշտպանութեան, իսկ մնացած երկուքը, ես՝ գրողը եւ դու՛ն՝ կարդացողը, մնացինք այստեղ շարունակելու համար այս սրբազան պայքարը։

Մեր նպատակն է՝ ամէն ջանք գործադրել, որպէսզի արցախցին մնայ Հայաստան. ՀՕՄ-ի Հայաստանի Ծրցանային վարչութեան ատենապետուհի Մարո Քեչիշեան

ՀՕՄ-ի Հայաստանի Երջանային վարչութեան ատենապետուհի Մարո Քեչիշեան «Ապառաժ»-ի հետ զրոյցին ընթացքին խօսած է Արցախի բռնի տեղահանութենէն ետք ՀՕՄ-ի կողմէ իրականացած արցախցիներու օժանդակութեան ծրագիրներուն մասին:

Անոր խօսքով՝ արցախցիներու տեղահանութենէն ետք, ՀՕՄ-ի Հայաստանի միւս կողմը՝ ՀՕՄ-ի Արցախի մեկուսի մասնաճիւղին հետ միասին, աշխարհասփռու ՀՕՄ-ի կառույցներուն հովանաւորութեամբ, մեծ թափով նուիրուած է օժանդակութեան գործին եւ հիմնական կեդրոնացումը արցախցիներուն վրայ էր: Հայաստանի մասնաճիւղերն ալ իրենց հերթին աշխոյժ կերպով մասնակցած են արցախահայտութեան աջակցութեան ծրագիրներուն:

«Առաջին հերթին սնունդով եւ առողջապահական պարագաներով փորձեցինք օգնել: 11 հազար ընտանիքի այս կամ այն ձևով օգտակար եղանք: Անոնցմէ բացի, վերջին պատերազմին գոհուած, Ստեփանակերտի քարիւղի պահեստին պայթուածին հետեւանքով մահացած կամ անհետ կորած, կարիքաւոր 827 ընտանիքի 40 հազար գրամի արժողութեամբ սնունդ գնելու կտրօններ տրամադրեցինք, յետոյ այդ կտրօններէն ստացան նաեւ հաշմանդամ երեխայ ունեցող 127 ընտանիք», նշած է Մարո Քեչիշեանը: Այժմ բազմազան ընտանիքներու տուեալներ կը հաւաքագրենք, որպէսզի նման ծրագիրներով օժանդակութիւն տրամադրենք:

Տեղահանութենէն ետք ՀՕՄ-ի Հայաստանի միւս կողմի կեդրոնին կը դիմեն բազմաթիւ արցախցիներ՝ տարբեր խնդիրներով ու հնարաւորինս ՀՕՄ-ը կը փորձէ օգտակար դառնալ հագուստով, սնունդով կամ այլ միջոցներով:

Միւս կողմը նաեւ հասցէատէքներուն կ'ուղղէ տարբեր բարեբարներու ուղարկած նուէրները, նիւթական միջոցները: «Գործի մէջ ապրող 53 ընտանիքի նիւթական օժանդակութիւն տրամադրուած է, զոր փոխանցած էր ՀՕՄ-ի ԱՄՆ-ի Արեւմտեան շրջանը: Նոյն շրջանին կողմէ տրամադրուած կենցաղային իրերը եւս բաժնած ենք Շիրակի մարզի Ախուրեան եւ Գիւմրի ապրող արցախցիներուն: Ինչ նուիրատու-

թիւն որ կը ստանանք, կը փորձենք հասցնել արցախահայտութեան, մեր դռները միշտ բաց են անոնց համար», կ'ըսէ ՀՕՄ-ի Հայաստանի միւս կողմի ատենապետուհին:

Նախքան կենցաղային իրեր յատկացնելը ՀՕՄ-ի Ախուրեանի մասնաճիւղի անդամները այցելած են արցախահայ կարիքաւոր ընտանիքներուն, գնահատած անոնց կարիքները, ապա տրամադրած համապատասխան օժանդակութիւն. սառնարան, լուացքի մեքենայ եւ այլ կենցաղային իրեր:


Մարո Քեչիշեան նաեւ յայտնած է, որ Բըրբէքի ՀՄԸՄ-ի տրամադրած նուիրատուութեամբ եւրօբայ սեմինար կազմակերպած է ՀՕՄ-ը Զերմուկի մէջ՝ ՀՅԴ ՀԵՄ-ի եւ ԱԵՄ-ի ընկերներուն համար: «Նաեւ երկու ճամբար կը նախատեսենք կազմակերպել Օգոստոս ամսուան ընթացքին Տաւուշի մարզի Իջևան եւ Սիւնիքի մարզի Կապան համայնքներուն մէջ, հիմնականօրէն արցախցի երեխաներու համար: Կը նախատեսենք նաեւ Շիրակի մարզին մէջ ալ կազմակերպել», յայտնած է Մարո Քեչիշեան:

Խօսելով երկարածամիկէտ ծրագիրներու մասին՝ ան առանձնացուցած է ՀՕՄ-ի Կեդրոնական վարչութեան «Յոյսի օճախներ» ծրագիրը: «Գիւղերուն մէջ տուներ կը գնենք, կը բարեկարգենք եւ կը յանձնենք արցախցի ընտանիքներու: Գործնական ընթացք ստացած այս ծրագրին առաջին տունը արդէն իսկ պատրաստ է Շիրակի մարզի Ախուրեանի գիւղին մէջ, որ շուտով կը յանձնուի Արցախի շարտար քաղաքէն բռնազաղթած բազմազան ընտանիքի: Կ'ուզենք մինչեւ տարեվերջ 10 ընտանիքի տուն տրամադրել», մանրամասնած է ան,- տուեալ ընտանիքը պէտք է 10 տարի ապրի այնտեղ, որմէ ետք տունը արդէն իր սեփականութիւնը կը դառնայ: Մեր նպատակն է՝ ամէն ջանք գործադրել, որպէսզի արցախցի Հայաստան մնայ, չհեռանայ այստեղէն», աւելցուցած է Մարո Քեչիշեան:

Տարբեր Աղաջանեան Արեւմտահայերէնի փոխարկեց Սոնա Թիթիզեան Կէտիկեան

Կեանքի հիւլէները միաձուլող ոսպնեակը

2022-ին հրապարակուեցաւ արուեստագետ Նարեկ Յարութիւնեանի լուսանկարչական Photaura հատորը, որուն 345 էջերուն մէջ ամփոփուած են տարիներու ընթացքին Նարեկի նորարարական արուեստի ռեժիմով լուսանկարները: Նշեմք, որ Նարեկը հիմնադիրն է Նարեկացի Արուեստի Միութեան: Ստորեւ հատորին եւ հեղինակի արուեստին մասին Վահագն Գարագաշեանի գրախօսականը:



Լուսանկարչութեան արուեստին պատկանող այս ալպոմը, տարբեր է միւսներէն: Այս գործը, դասական արուեստէն դէպի անդրանձային անհունները ճանապարհորդութիւնն էր և հեքիաթային այդ բանահիւստութեան մէջ Նարեկի պատկերներու տիպարներուն ու պահերուն հետ ներկայ է եւ գործողութեանց մասնակից է նաեւ դիտողը:

Այստեղ արուեստի իւրաքանչիւր գործ իր մէջ կը պարփակէ լոյսն ու կեանքը միաձուլող արձագանք մը: Անոնց մէջ անշարժացած ակնթարթներ կան, որոնք դիտողին աչքով կրնան երկրային ու երկնային բազմազան այլ պահերու վերափոխուիլ: Աւելին՝ ոգեղէն շունչը, գոյներու ներդաշնակ տարաբաշխումը եւ անշարժացած պահը՝ մեզ կը փոխադրեն դէպի ծաւալող անջրպետ մը, ուր ներկայի, անցեալի եւ ապագայի ժամանակի հասկացողութիւնը՝ անզօր կը դառնայ իրականին ու իմաստին դիմաց:

Գեղեցկութեան ցայտող փրփուրներ են Նարեկի արձանագրած նկարներու ամէն մի հիւլէ, փրփուրներ, որոնք մերթ կ'ալեկոծին, մերթ կը տառապին, կ'աղբերանեն, կը ծլին, կը ժայթքին ու կ'երգեն:

Ահա «պարուհին», որուն շուրջ տիեզերքը իր անասմանութեամբ պար բռնած է: «Հրեշտակներ» իրենց թեւերը տարածած՝ երկնային հոգեպարար բարձրացումի (elevation) տարբերքի մէջ են: Երջանային գոյութեանական բոլոր շերտերը ճեղքելով՝ սլացող գոյները «Իշխանուհի»ի էութիւնը վեր կը բարձրացնեն դէպի անհունը, այնտեղ, ուր դիտողին մտքին մէջ արդէն ստեղծուած ու կերտուած է աննիւթեղէն բայց գեղեցիկ հասնումի վայրը:

Մերթիւով լուսանկարչութեան դասական ուղեգիծը, արուեստագէտը իր ստեղծագործութիւններուն կու տայ նոր եւ տարբեր կազմախօսութիւն (anatomy) մը, որ իրողութեան մէջ հոգեբանափոփանց (psychophysiologique) է: Արուեստագէտի ոսպնեակին մէջ առկայժող իւրաքանչիւր հիւլէ կը միաձուլուի ժամանակի ու տարածութեան մէջ եւ կը ստեղծէ անդիմադրելի ուժականութիւն մը, որ իւրաքանչիւր տեսողական զգալարանքի ըմբռնումի (perception) շրջագիծը կ'ընդլայնէ, կը բազմապատկէ ու վերջապէս մեզ կը մղէ, որ մտովին խորասուզուինք կերտող գեղեցիկին մէջ:

Լուսանկարչը ապստեղ անտարակոյս որ գիտակից է գեղեցկութեան էաբանութեան եւ իր գործերու համընդհանուր պարունակին մէջ հմտօրէն կը շարժուի ու կը զօդէ յորինուածքի տարրերը, շարակարգութիւնը (composition), ձեւն ու ոգին, որոնց միաձուլումով կը ստեղծուի դէպի գեղեցկութիւն իմացական թռիչքը:

Նարեկի այս հատորին մէջ կը տրուի իր սիրտը, որ իրականութեան մէջ իւրաքանչիւրիս սրտի բաբախումն է: Ի վերջոյ, արուեստագէտ մը իր անձէն դուրս՝ թարգմանն է նաեւ համայն մարդկութեան իղձերուն ու երազներուն:

Նարեկի ստեղծագործութիւններու այս փուլը նորօրեայ խիզախութիւնն է մըն է, կամուրջներէն անդին ու գազաթիւններէն վեր, ուր գեղեցկութեան ոգին կը թափարկի իրբեւ համանուագ ու կը նուաճէ էութիւնը:

Վահագն Գարագաշեան

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ

«ԱՐԱՄ ԵՒ ՍԵՂԱ ՍԵՄԷՐՃԵԱՆ ԸՆՏԱՆԵԿԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄ»

2015-2016 ուսումնական տարեշրջանի նախօրեակին բժիշկ Արամ Սեմէրճեան եւ իր ազնիւ կողակիցը՝ տիկին Սեղան, որոշեցին հիմնադրամ մը ստեղծել՝ ի նպատակով հայ համալսարանական արժանաւոր ուսանողներու, որոնք Քեպէք նահանգի համալսարաններէն մէկուն մէջ կը հետեւին Առողջապահական, Համակարգչային կամ Անապահական եւ Կիրառական Գիտութեանց ճիւղերուն:

Նման նախաձեռնութիւն արդիւնք է խորհրդակցութեանց, յատկապէս մոնթրէալբերկ բժիշկ Ժան Առաքելեանի հետ: Հիմնադրամը կը կոչուեցաւ՝ «ԱՐԱՄ ԵՒ ՍԵՂԱ ՍԵՄԷՐՃԵԱՆ ԸՆՏԱՆԵԿԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄ»

Բժիշկ Ժան Առաքելեանի գլխաւորութեամբ յառաջացաւ երեք հոգիներէ բաղկացած յանձնախումբ մը՝ անհրաժեշտ աշխատանքները կազմակերպելու, դիմումագիրները ընդունելու եւ արժանաւոր ուսանողները ընտրելու նպատակաւ: Սկզբնական շրջանի անդամներն էին բժիշկ Ժան Առաքելեան, բժիշկ Վազգէն Տէր Գալուստեան եւ պարոն Յակոբ Պուկարեան: Հետագային բժիշկ Վազգէն Տէր Գալուստեանին փոխարինեց բժիշկ Արմէն Ափրիկեան:

Բժիշկ Արամ եւ տիկին Սեմէրճեան ամուր նախկին լիբանանահայեր են, հաստատուած Illinois նահանգի Chicago քաղաքը, Միացեալ Նահանգներ, եւ հոն կազմած իրենց հայկական ընտանեկան բոյնը: Բժիշկ Արամ Սեմէրճեանը 60 տարիներէ աւելի փորձառութիւն ունեցող մասնագէտ արտորոշիչ ճառագայթաբան է, որ ընդհանրապէս գործած է Indiana եւ Արեւելեան Chicago քաղաքներուն մէջ:

«ԱՐԱՄ ԵՒ ՍԵՂԱ ՍԵՄԷՐՃԵԱՆ ԸՆՏԱՆԵԿԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄ»ի բարեսիրական գործունէութիւնը սկիզբ առած է 2015-2016 ուսումնական տարեշրջանին, երբ (3) ուսանողներով, իսկ վերջ տուած իր լայնածաւալ գործունէութեան՝ Դեկտեմբեր 2024-ին, քսանմէկ (21) ուսանողներով: Այս ինն (9) տարիներուն ընթացքին հիմնադրամը կը թափոխուի յատկացուցած է իւրաքանչիւր ուսանողի ուսման տարեկան ծախսերը ամբողջութեամբ հոգալով, ընդհանրապէս երեք (3), չորս (4) կամ հինգ (5) անընդմէջ տարիներ, իսկ բացառաբար մէկ (1) ուսանողի պարագային հոգաց եթ (7) տարիներու ուսման ծախսերը:

«ԱՐԱՄ ԵՒ ՍԵՂԱ ՍԵՄԷՐՃԵԱՆ ԸՆՏԱՆԵԿԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄ»ը հպարտօրէն կը յայտարարէ, թէ իր բարեսիրական գործունէութեան աւարտին եւ անցնող ինն (9) ուսումնական տարիներուն ընթացքին հիմնադրամէն օգտուող քսանմէկ (21) ուսանողներէն ութն (8) իրական եւ տասներեք (13) արական սեռի կը պատկանին, որոնցմէ եթ (7) վկայուած են որպէս բժիշկ, երկուք (2)՝ անդաբան, երեք (3)՝ ատամնաբու, մէկ (1)՝ դեղագործ, երեք (3)՝ ճարտարագէտ, իսկ հինգ (5)՝ համակարգչային գիտութեանց մասնագէտ:

«ԱՐԱՄ ԵՒ ՍԵՂԱ ՍԵՄԷՐՃԵԱՆ ԸՆՏԱՆԵԿԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄ»ը սոյն յայտարարութեամբ կու գայ յայտնելու, որ իր բարեսիրական գործունէութիւնը հասած է իր աւարտին: Այս առթիւ վերստին կը շնորհակարտ բոլոր անոնց, որոնք արժանացան «ԱՐԱՄ ԵՒ ՍԵՂԱ ՍԵՄԷՐՃԵԱՆ ԸՆՏԱՆԵԿԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄ»ի «Սան»ի կոչումին: Նաեւ պաշտօնապէս խորին շնորհակալութիւն կը յայտնէ դիմումագիրները սերտող եւ արժանաւոր ուսանողներ ընտրող յանձնախումբի անդամներուն, որոնք չափազանց բճախնդրութեամբ կատարեցին իրենց վստահուած պարտականութիւնը:

| | |
|--|--|
| Այցելեցէք hitunes.ca կայքէջը եւ օրական 24 ժամ՝ ունկնդրեցէք Սառա Եղիայեանի կողմէ ընտրուած հայկական երգերը | Ունկնդրեցէք trikitrak.ca կայքէջը հայկական հասնացանցային օստիոճախի երգերը օրական 24 ժամ, իսկ ամէն իրնգշապօք երէկ, ժամը 8:00 - 9:00 յոցէ շաբթեակաւ հարցազրուցներ |
| HITUNES.CA | TRIKITRAK.CA |

Ատրպեյճան քանդեց Արցախի Հաղորդի շրջանի Մոխրենես գիւղը



Հիմնուելով արբանակային լուսանկարներու ներկայացուցած փաստերուն վրայ՝ Ատրպեյճան քանդած է Հոկտեմբեր 2020-ին Ատրպեյճանի վերահսկողութեան տակ անցած Արցախի Հաղորդի շրջանի Մոխրենես գիւղը: Աւերուած է գիւղի տուներուն մեծամասնութիւնը, դպրոցը եւ մանկապարտէզը: Այս մասին կ'ահագանգէ monumentwatch.org-ը, որուն այս առիթով հրատարակած յայտարարութեան մէջ կ'ըսուի հետեւեալը.

«Դեռեւս 2022 թուականին Ատրպեյճանը ոչնչացրել է Մոխրենեսի Սբ. Սարգիս եկեղեցին: Մոխրենես գիւղը եւ շրջակայքը հարուստ են յուշարձաններով: Մոխրենես գիւղի տարածքում հաշուառուած են աւելի քան 20 յուշարձաններ, գիւղի մօտ է գտնուում յայտնի Օխտը դռնի վանքը: Ոչնչացման գործողութիւնների հետեւանքով ուղղակի վտանգի տակ են յայտնուում գիւղի շրջակայքում գտնուող յուշարձանները:

«2021 թուականից սկսած օկուպացուած (գրաւուած) Արցախում ատրպեյճանական կողմի իրականացուող մեծածաւալ ճանապարհաշինարարական, ենթակառուցուածքային աշխատանքների հետեւանքով Արցախի բազմաթիւ գիւղերում կատարուում էին մեծածաւալ աւերումներ: Ռիսկային (վտանգուած) գօտում են յատկապէս Հաղորդի շրջանի գիւղերը եւ դրանց յարակից տարածքները, ինչը պայմանաւորուած էր Շուշի տանող երկու նոր ճանապարհների, դրանց սպասարկող ենթակառուցուածքների կառուցմամբ, երբ աւերուում էին հսկայական տարածքներ ճանապարհների անցկացման, ինչպէս նաեւ շինտեխնիկայի (շինարարութեան կազմածներու), սպասարկող անձնակազմի, շինարարական նիւթերի եւ թափօնների կուտակման համար: Յաճախ տարաբնոյթ ինժեներական (ճարտարագիտական) հարցերը լուծուում էին ի հաշիւ հայկական գիւղերի կամ դրանց տների աւերման ատրպեյճանական ճանապարհներով եւ վտանգով: Մոխրենես գիւղի աւերումը թերեւս հէնց այս միտումնաւոր գործողութիւնների հետեւանքն է:

«Մեր արձագանգը

«Մոխրենես գիւղի ենթակառուցուածքների եւ մշակութային յուշարձանների ոչնչացումը փորձելով դիտարկել մշակութային ժառանգութեան լայն հայեցակարգի շրջանակներում, պէտք է նշենք, որ այս դէպքում յարձակման են ենթարկուել թէ՛ նիւթական կառոյցները, եւ թէ՛ ոչ նիւթական ժառանգութիւնը,

այդ թւում աւանդույթները, պատմութիւնները, մարդկանց կենցաղավարման մշակոյթը: Եւրոպայի Խորհրդի կողմից ընդունուած մշակութային ժառանգութեան շրջանակում ազդեցութեան փաստաթղթում ժառանգութիւնը սահմանուած է հետեւեալ կերպ.

«Մշակութային ժառանգութիւնը ընդգրկելով նիւթական եւ ոչ նիւթական հարթութիւնը, հմտութիւնները, «իմանալ-ինչպէս»ը, պատկերացումները, վերաբերմունքն ու այլ տարրեր, անքակտելիորէն կապուած է դրա համատեքստի եւ այն բնական ու մշակութային միջավայրի հետ, որտեղ այն ձեւաւորուել է (Recommendation of the Committee of Ministers to member States on the European Cultural Heritage Strategy for the 21st century, (Adopted by the Committee of Ministers on 22 February 2017 at the 1278th meeting of the Ministers' Deputies),p. 3): Ուստի, Արցախի մշակութային ժառանգութեան ցանկացած ոչնչացում ոչ միայն տուեալ արժէքի ֆիզիքական կորուստին է յանգում, այլեւ վնասում է ինքնութեանը, խաթարում բնական միջավայրը եւ հապէս վնասում արցախահայերի մշակոյթի իրաւունքը: Արցախի ժողովրդին՝ իր բնիկ տարածքից բռնի հեռացնելը, իր իսկ ժառանգութեան հետ հաղորդակցուելու, իր համայնքի մշակութային կեանքում ներգրուած ունենալու, ժառանգութիւնը կենսունակ պահելու եւ այն սերունդներին փոխանցելու հնարաւորութեան չէզոքացումը կամ բռնի տեղահանութեամբ կասեցումը էական խոչընդոտ է ինքնութեան պահպանութեան համար եւ վերստեղծման համար:

«Գիւղի ոչնչացումը Ատրպեյճանի կողմից պատերազմի ժամանակ եւ բռնագաւթման ողջ ընթացքում համակցուած յանցագործութիւնների շարք է՝ խախտելով թէ՛ պատերազմի ժամանակ ժառանգութեան պահպանութեան միջազգային նորմերն ու ԵՈՒՆԵՍԿՕ-ի կողմից հաստատուած իսկութեան եւ ամբողջականութեան սկզբունքները, այլեւ Արդարադատութեան միջազգային դատարանի որոշումները: Գիւղին հասցուած վնասը համաձայն «Զինուած հակամարտութիւնների ժամանակ մշակութային արժէքների պաշտպանութեան մասին» Հաագայի 1954 թ. Կոնվենցիայի (վեհաժողովի) 4-րդ յօդուածի եւ լրացուցիչ՝ 1999 թ. ընդունուած Երկրորդ արձանագրութեան 15-րդ յօդուածի Ա. կէտի, «լուրջ խախտում» է, որը՝ որպէս ռազմական յանցագործութիւն, կարող է հետապնդուել միջազգային դատարաններում:

Շուշիէն Ստեփանակերտ ու Երեւան. «Վարանդա» երգչախումբը կը շարունակէ իր գործունէութիւնը



Շուշիի «Վարանդա» երգչախումբի հիմնադիր, գեղարուեստական ղեկավար, Համազգային հայ կրթական եւ մշակութային միութեան Կեդրոնական վարչութեան ատենապետ Զաքար Քեչիշեանը Երեւանի մէջ կը կազմակերպէ «Երգող Արցախ» երգչախումբային ծրագիրը, որուն կը մասնակցին 10-14 տարեկան արցախցի երեխաներ:

«Ապառաժ»-ի հետ գրոյցի մը ընթացքին՝ Զաքար Քեչիշեան նշած է, որ հակառակ նոր պայմաններու մէջ յառաջացած բազմաթիւ խնդիրներուն՝ որոշած են շարունակել գործունէութիւնը:

«Երեխաները անընդհատ կը գրէին, թէ արդեօ՞ք հնարաւոր է Երեւանի մէջ ծրագիրը իրագործել: Facebook-ի վրայ յայտարարութիւն դրի, քանի որ չէի գիտեր՝ ով ուր կ'ապրի հիմա: Պարզուեցաւ, որ մեծ մասամբ կ'ապրին Երեւան, Մասիս եւ Աբովեան քաղաքներուն մէջ, հետեւեալը ծրագիրը իրագործելու համար այս ամառ եկալ այստեղ», - նշած է ան:

2020 թ. պատերազմէն եւ Շուշիի անկումէն ետք «Վարանդա» երգչախումբի տնօրէնութիւնը Ստեփանակերտի մէջ կեանքի կոչած էր «Երգող Արցախ» երաժշտական ծրագիրը եւ յաջորդող տարիներուն՝ նաեւ նոր սաներով, իրագործած զայն:

«32 տարուան ընթացքին միայն անցեալ տարի էր, որ շրջափակման պատճառով չկրցայ այցելել Արցախ», կը յիշէ ան:

Երեւանի մէջ ծրագիրը կը ֆինանսաւորեն ԱՄՆ-ի Կրիկիոյ կաթողիկոսութեան թեմը եւ քանի մը անհատ: Արդէն շուրջ 80 երեխայ հաւաքագրուած են, եւ փորձերը սկսած են: Փորձերը տեղի կ'ունենան Երկուշաբթի, Երեքշաբթի, Հինգշաբթի եւ Ուրբաթ օրերը, ժամը 15:00-16:30՝ Սայաթ Նովա փողոցի 15 հասցէին վրայ գտնուող Հայաստանի երաժշտական ընկերութեան դահլիճին մէջ: Մասնակցութիւնը անվճար է, ցանկացողները կրնան միանալ:

Աւանդաբար «Վարանդա»-ի փորձերը կ'եզրափակուին համերգային ծրագիրով, այս տարին ալ բացառութիւն պիտի չըլլայ:

Կը նախատեսուի Օգոստոսի վերջը եւ Սեպտեմբերի առաջին կիսուն շարք մը ելոյթներ ունենալ Երեւանի եւ մօտակայ քաղաքներու մէջ:

Խօսելով խնդիրներուն մասին՝ Զաքար Քեչիշեան նշած է, որ այստեղ դեռ չկան գործունէութեան համար այն պայմանները, որոնք Արցախի մէջ կային. «Բայց, փոխարէնը ունինք կամք, նուիրում, հաւատք եւ արցախցի հրաշալի երեխաներ, որոնք պիտի իրագործեն այդ ծրագիրը: Ծրագիրը կ'ընդգրկէ նաեւ երեխաներու մշակութային կազմաւորման նպաստող այցելութիւններ՝ համերգներ, թանգարաններ եւ թատրոններ», աւելցուցած է ան:

Համազգայինի Կեդրոնական վարչութեան ատենապետը նաեւ խօսած է Երեւանի գրասենեակին կողմէ իրականացուող ծրագրերուն մասին: Անոր խօսքով՝ ի տարբերութիւն հայրենի իշխանութիւններուն, Համազգայինի Կեդրոնական վարչութիւնը որոշած է Համազգայինի Արցախի կառոյցը Հայաստանի մէջ պահել իբրեւ վտարանդի կառոյց՝ իր վարչութեամբ ու կազմով:

«Համազգայինի գրասենեակը կ'իրականացնէ շարք մը ծրագրեր՝ հոգեբաններու հետ աշխատանք, ամառային դպրոց, կերպարուեստ, տիկնիկագործութիւն, Արցախի բարբառը պահպանելուն ուղղուած միջոցառումներ, համալսարան ընդունուելի ցանկացողներու համար Հայոց լեզուի ուսուցման ծրագիր եւ բազմաթիւ այլ ծրագրեր», ընդգծած է ան:

Իսկ դուրս ինչպէ՞ս կ'աշխատի Արցախէն հեռու հարցին, կը պատասխանէ՝ «ատամները սեղմելով»:

Տարեիկ Աղաջանեան
«Ապառաժ»

Գանատայի Հայ Աւետարանչական Ընկերակցութիւնը արցախահայութեան կողքին



«Գանատայի Հայ Աւետարանչական Ընկերակցութեան կազմակերպած համերգներէն հանգանակուեցաւ մօտ 150 հազար տոլար, որոնք կը յատկացուին Հայաստան հաստատուած արցախցի ընտանիքներուն օժանդակութեան»։ Կ'ըսէ Ամերիկայի Հայ Աւետարանչական Ընկերակցութեան Գանատայի ներկայացուցիչ Յարութ Ներսէսեան

17 Մայիսէն 3 Յունիս երկարող ժամանակաշրջանին Ամերիկայի Հայ Աւետարանչական Ընկերակցութեան (ԱՀԱԸ) Գանատայի ներկայացուցիչ Յարութ Ներսէսեան այցելութիւն կատարեց Հայաստան եւ Լիբանան, մօտէն հետամուտ ըլլալու ԱՀԱԸ-ի տարած լայնածաւալ գործունէութեան։ Այս առթիւ «Հորիզոն» հարցազրոյց մը ունեցաւ իր հետ, որուն ընթացքին յայտնեց, թէ նշեալ այցելութիւններուն հիմնական նպատակն էր այցելել Աւետարանչական ընկերակցութեան կեդրոնները եւ թարմացնել տուեալները Հայաստանի մէջ կատարուած աշխատանքներուն, տրուած ըլլալով որ ինք Հայաստանի մէջ երկարատեւ ծառայութիւն ունեցած է եւ քաջածանօթ՝ հոն կատարուած ծառայութեանց, ինչպէս նաեւ մօտէն ծանօթանալ Լիբանանի մէջ ընկերակցութեան գործունէութեան։

Խօսելով իր տպաւորութիւններուն մասին Ներսէսեան յայտնեց, թէ յուզիչ եւ միեւնոյն ժամանակ քաջալերական էին իր ունեցած հանդիպումները, յատկապէս արցախցի ընտանիքներուն հետ, որոնց կ'օժանդակէ Աւետարանչական ընկերակցութիւնը։ «Այցելեցի Սիւնիք, Սիսեան, Գորիս, Երեւան, Վանաձոր, Ստեփանաւան եւ Գիւմրի, ուր այցելեցի մեր կեդրոնները, արցախցի 4 ընտանիքներ եւ այլ ծրագիրներէ շահառու 3 ընտանիքներ։ Արցախցի ընտանիքներուն ցաւը ահաւոր է, կորուստը անփոխարինելի, ոմանք մագալուրծ փախած, առանց հազուատկապուստ բերելու իրենց հետ, 36 ժամ անօթի-ծարաւ ճամբայ կտրելով հասած են Հայաստան. ասոնց յիշողութեան մէջ տպաւորուած են ահաւոր պատմութիւններ Արցախի շրջափակումէն եւ տեղահանութենէն, բայց հետաքրքրականը այն է, որ մեր ժողովուրդը այդ անտանելի պայմաններուն մէջ նոյնիսկ իրարու օգնութեան հասած է ըստ կարելոյն», ըսաւ Ներսէսեան։

Այն հարցին, թէ արցախցիներուն համար արդեօ՞ք կեանքը հունի մէջ մտած է, թէ տակաւին անորոշ վիճակ կը տիրէ, Ներսէսեան յայտնեց, թէ որքան ալ բնականօրէն կերպով կեանքը կը շարունակուի, եւ երկրի տնտեսութիւնը թափով կ'աճի, սակայն մարդոց հոգիներուն մէջ կայ վախ եւ անորոշութիւն՝ ապագայի նկատմամբ, ապահովութեան եւ սահմաններու նկատմամբ. «Երեւութապէս ամէն ինչ բնականօրէն կը թուի, բայց երբ մօտենաս եւ խօսակցիս ժողովուրդին հետ, յատկապէս՝ արցախցիներուն հետ, ի յայտ կու գայ, թէ մարդոց սրտերուն մէջ անապահովութեան ու վախի զգացումը առկայ է», ըսաւ ան։

Թէ բոլոր ընտանիքները տեղաւորուած են՝ ոչ, կ'ըսէ Ներսէսեան եւ կ'աւելցնէ, թէ ընտանիքները ձեւով մը տեղ մը պատասպարուած են, անոնց մեծամասնութիւնը կ'ապրի անորոշ վիճակի մէջ եւ մտահոգ, որովհետեւ պետական օժանդակութիւնները մէկ

տարուան տեւողութեամբ են եւ շուտով պիտի դադորին։ «Մենք կը խօսինք 100 հազարաւոր արցախցիի մասին, ասոնց տեղաւորելն ու գործ ապահովելը բաւականին դժուար մարտահրաւէր է։ Մեր ընկերակցութիւնը ներկայիս եւ մօտ ապագային պիտի հովանաւորէ մօտ 150-200 ընտանիք, հաւանաբար եւ աւելի (այսինքն մօտաւորապէս 1000 անհատ), մէկ անգամուան օգնութիւն կը բաժնէ 500-1000 ընտանիքի. ասոնք չափազանց անհրաժեշտ են, բայց անկեղծօրէն կարիքը շատ աւելի մեծ է, իսկ կարելիութիւնները՝ սահմանափակ։ Արտագաղթն ալ առկայ է, ոմանք արդէն գացին, իսկ մնացողներէն շատեր կը ցանկան արտագաղթել» կ'ըսէ ան։

Հոս կայ նաեւ այլ խրթին հարց մը, յատկապէս գինուորականներու պարագային, որոնց թիւը բաւական մեծ է, եւ որոնք տարիներէ ի վեր բանակին մէջ կը ծառայեն. «Հայաստանի կառավարութիւնը կը պարտադրէ անոնց գրանցումը փոխել, որպէսզի կարենան Հայաստանի բանակին մէջ ծառայել, իսկ շատեր չեն ուզեր իրենց գրանցումը փոխել... այսպիսով բաւական խրթին հարցեր կան, զորս տակաւին չեն յտակացած», կ'ըսէ Ներսէսեան։

Նշենք, որ Արցախի մէջ Աւետարանչական Ընկերակցութեան կեդրոններէն ներս մօտաւորապէս 90 պաշտօնեայ կը գործէր. ոմանց արդէն գործ ապահովուած է ընկերակցութեան մէջ, իսկ միւսներուն ամսականները կը շարունակուին մինչեւ մէկ տարի։

Անդրադառնալով Լիբանան այցելութեան ընթացքին իր տպաւորութեանց, Ներսէսեան ըսաւ. «Լիբանան հասաւ Մայիս 30-ին, ուր սարսափելի ծանր տնտեսական իրավիճակ կը տիրէ, ինչպէս նաեւ կենսակերպի անհամեմատելի ծայրայեղութիւն՝ շատ հարուստ խաւ մը կայ, որ կ'ապրի գելի կեանք մը, մինչ ժողովուրդին մեծամասնութիւնը օրապահիկը դժուար կը ճարէ»։

«Նախ այցելեցի իմ յաճախած վարժարանս՝ Հայ Աւետարանական գոլէճը, որ հայկական միակ վարժարանն է Արեւմտեան Պէյրութի մէջ, եւ ուր հայ ընտանիքներու թիւը սակաւ է։ Դպրոցը ունի 112 աշակերտ. անոնց մէջ կան արաբներ, որոնք սահուն հայերէն կը խօսին, կը գրեն եւ կը կարդան», ըսաւ ան։

Այնճարի դպրոցին պարագային Ներսէսեան յայտնեց, որ Հայ Աւետարանական Երկրորդական վարժարանը հիմնուած է 1942-ին Մերձաւոր Արեւելքի Հայ Աւետարանական Եկեղեցիներու Միութեան կողմէ, եւրոպացի միսիոնարներու աջակցութեամբ, եւ որ բաւական առաջնորդներ եւ հերոսներ տուած է Հայ ազգին։ «Այնճարի Հայ Աւետարանական երկրորդական վարժարանը բարձրորակ կրթութիւն կը փոխանցէ աշակերտներուն, ունի շերմոցներ, ուր աշակերտները կը փորձարկեն գիւղատնտեսական փորձարկումներ, ունի նաեւ յառաջացած կրթական համակարգ։ Աշակերտութեան թիւը 193 աշակերտ է, որոնցմէ 86-ն գիշերօթիկ կը մնայ։ Տնօրէնն է Վեր. Յակոբ Ազպաշարեան, իսկ կինը՝ Նանոր Ազպաշարեան գիշերօթիկին պատասխանատուն է, ուր աշակերտներուն մեծ մասը քայքայուած եւ ծայրայեղ աղքատութեան մէջ ապրող ընտանիքներու զաւակներ են Պէյրութի շրջաններէն, եւ որոնք սիրոյ ու գուրգուրանքի կը

կարօտին։ Անոնք գիշերօթիկ յաճախելով կը վայելեն սէր եւ չափազանց լաւ հոգատարութիւն, ինչպէս նաեւ իրենց կը ջամբուի քրիստոնէական եւ հայեցի դաստիարակութիւն։ Գիշերօթիկի աշակերտները ամբողջ կը վերադառնան իրենց տուները, սակայն դպրոցը նոր ծրագիր մը կը մշակէ, որպէսզի գիշերօթիկը բաց մնայ ամբողջ եւս եւ պահէ այն աշակերտները, որոնք մատչելի միջավայրէ զուրկ են։ Վարժարանը կը փորձէ կարելիութիւն ընծայել անոնց՝ շարունակելու իրենց ամառնային արձակուրդը մեր տաք օճախին մէջ, ինչպէս նաեւ մասնակցելու Աւետարանական Միութեան ճամբարներուն», կ'ըսէ Ներսէսեան։

Ան յայտնեց, թէ այցելած է նաեւ Հայ Աւետարանական կեդրոնական Բարձրագոյն վարժարանը, որ մեծագոյնն է Աւետարանական դպրոցներուն, Թրատի կեդրոնը, ուր կարեքաւոր ընտանիքներու օգնութիւն կը բաժնուի, ինչպէս նաեւ այլ ծառայութիւններ՝ բժշկական, դեղորայքի, հոգեբանական ծառայութիւն եւ ամառնային ճամբարներ։ Այցելած է Մերանոցը՝ Գահլըը, որուն կ'օժանդակէ Ընկերակցութիւնը, եւ ուր կը պատասպարուին անտէր ծերերը։ Այցելութիւններու ծիրէն ներս եղած է նաեւ Հայկազեան համալսարանը, որ Սփիւռքի միակ հայկական համալսարանն է եւ ծանրակշիռ վարկ ունի հայ եւ օտար միջավայրէն, ինչպէս նաեւ կրթական շրջանակէն ներս։ Ներսէսեան այցելած է նաեւ Նոր Մարաշի Շամլեան Թաթիկեան վարժարանը։

«Այնճարի գիշերօթիկին նման մենք Հայաստանի մէջ եւս ունինք մեր «Շող» կեդրոնները (4 կեդրոն, ոչ գիշերօթիկ), ուր կը յաճախեն քայքայուած ընտանիքներու զաւակները, եւ ուր հոգեբաններու, ընկերային ծառայողներու եւ մանկավարժներու հոգատարութեամբ անոնք կը կազմակերպուին։ «Շող» 2 կեդրոն ունէինք նաեւ Արցախի մէջ՝ Շուշի եւ Ասկերան», ըսաւ Ներսէսեան։

Ան շեշտեց, թէ Գանատայի մասնաճիւղը Աւետարանչականի բոլոր ծրագիրներուն կ'օժանդակէ, ըստ կարելոյն, բայց իրենց անմիջական հոգատարութեան յանձնուած է Այնճարի դպրոցը եւ նախապէս՝ Ասկերանի Պասմաճեան մանկապարտէզը Արցախի մէջ (գանատահայ Եփրեմ եւ Զապէլ Պասմաճեաններու որդի)՝ Յակոբ Պասմաճեանի հովանաւորութեամբ, Ներսէսեան յայտնեց նաեւ, թէ մօտօրէն պիտի յայտարարուին նաեւ նոր ծրագիրներ։

Ան աւելցուց, որ Ապրիլ ամսուն, արցախցիներուն օժանդակութեան համար, Մոնթրէալի եւ Թորոնթոյի մէջ կազմակերպուած համերգներէն հանգանակուեցաւ մօտ 150 հազար տոլար, որոնք կը յատկացուին արցախցի ընտանիքներուն բնակարաններու ապահովման, վարձքերու հոգացման եւ աշխատանքի ապահովման ծրագիրներուն։

Նշենք, որ Գանատայի Հայ Աւետարանչական Ընկերակցութեան ծրագիրներուն մասին կարելի է մանրամասն տեղեկութիւններ քաղել www.amacnews.org կայքէջէն։

Սոնա Թիթիզեան Կէտիկեան
«Հորիզոն»



ԼՈՒՍԱՒՈՐԻՉ

ԵԿԵՂԵՑԻՆ ՏԱՆ ՄԷՉ

ԳԱՆԱՏԱՅԻ ՀԱՅՈՑ ԹԵՄԻ ԱԶԳԱՅԻՆ ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՆԻ ԿՐՕՆԱԿԱՆ ԱՄՍԱԹԵՐԹ

Է. ՏԱՐԻ, Թիւ 9, Օգոստոս 2024



ԱՆԲԱՍԻՐ ՄԱՅՐԸ՝ ՄԻՋՆՈՐԴՆ ՈՒ ԿԱՄՈՒՐՁԸ ԵՐԿՆՔԻ ԵՒ ԵՐԿՐԻ

Սուրբ Աստուածածնի վերափոխման տօն: Տօն մը որ առիթը կ'ընծայէ մեզի մտածելու Սուրբ Կոյսի անձին ու մանաւանդ անոր ունեցած դերակատարութեան մասին:

Ո՞վ էր Սուրբ Կոյս Մարիամ:

«Անսպառ Լոյսի Աղբիւր»ը՝ Սուրբ Կոյս Մարիամ Հրեշտակապետի աւետման առաջին իսկ վարկեանէն յանձնառու դարձաւ Աստուածամայր դառնալու: Աստուծոյ կամքին հնազանդելով արժանի դարձաւ Աստուածորդոյն՝ Քրիստոսի մայրը դառնալու:

Սուրբ Կոյս Մարիամ իր առաքինազարդ նկարագրով՝ անարատութեամբ, խոնարհութեամբ եւ ազնուութեամբ աստուածային դերակատարութիւն ունեցաւ փրկութեան պատմութեան ծրագրին մէջ: Հրեշտակը «ուրախացի՛ր, շնորհալի՛ կոյս,» (Ղկ 1.28) կ'ըսէ Մարիամին, բայց նաեւ ուրախութեան պատճառը կը մատնանշէ. «Որովհետեւ Աստուած քեզի հետ է»:

Անարատ կոյս Մարիամ «այո» ըսելով աստուածային ծրագրին հաճեցաւ Սուրբ Հոգիին ներգործութեամբ Անսահմանելին զարմանահրաշօրէն աշխարհ բերել, որ Իր յաւիտենական յոյսով եւ փառքով շօշափելի դարձաւ մարդկային աչքին (Եբր.1:3):

«Անսպական Կոյս»՝ որ դարձաւ խորհրդանիշը տիպար մայրութեան: Շարականագիր վարդապետին բառերով դարձաւ «Մայրը Լոյսի Տաճարին», «Մանանայով լեցուն ոսկեղէն Սափոր»ը, «Համեղաճաշակ պտուղին նորաբոյս ճիւղը, որմէ քաղուեցաւ անսպառ ուրախութեան ողողկոյզը» եւ մանաւանդ դարձաւ «փափկութեան դրախտը բացող բանալին»:

Անբասիր Մայրը՝ մեր Փրկչին Յիսուսի Քրիստոսի, երկինքն ու երկիրը իրար կապող կամուրջը դարձաւ եւ բացաւ «Անդատապարտ շառափղ»ը, միջնորդելու եւ հաշտեցնելու մարդը իր արարիչին՝ Աստուծոյ հետ: «Աներեւոյթ Աստուծոյ պատկերը՝ Քրիստոս» Սուրբ Կոյս Մարիամէն ծնելով վերահաստատեց կորուսեալ դրախտը՝ մարդուն շնորհելով երջանկութեամբ լեցուն տաքուն ու խաղաղ օթեան:

Այսօր, մենք եւս Սուրբ Մարիամ Աստուածածնի մայրական շարունակական բարեխօսութեան եւ միջնորդութեան կարիքը ունինք: Բարեխօսութեան մը, որ մխիթարութեան եւ ուժի աղբիւր է եւ կը յիշեցնէ մեզի որ մենք առանձին չենք մեր հաւատքի ճանապարհորդութեան մէջ:

Այսօր յաճախ դէմ յանդիման կը գնուինք բազմաթիւ մարտահրաւերներու: Ինչպէս Ս. Կոյս Մարիամ, մենք ալ կոչուած ենք վստահելու Աստուծոյ կամքին ու ծրագրին:

Եկէ՛ք, մենք եւս ձգտինք Սուրբ Կոյս Մարիամի օրինակով մաքրութեան, խոնարհութեան եւ հնազանդութեան իր ԲԱՐԵՄՕՍՈՒԹԵԱՄԲ, ՄԻՋՆՈՐԴՈՒԹԵԱՄԲ եւ առաջնորդութեամբ:

ԲԱՐԳԷՆ ԱՐՔԵՂԻՍԿՈՂՈՍ

ԽՄԲԱԳՐԱԿԱՆ

Հայ Եկեղեցին մեծ յարգանք ընծայած է Սուրբ Կոյս Աստուածածնի անձին ու ունեցած դերին հանդէպ:

Սուրբ Կոյս իր նուիրումին եւ ինքնազոհողութեան համար արժանացած է Աստուածամայր տիտղոսին, որովհետեւ ան իր արգանդին մէջ մարմնացնելով Անբաւելի Աստուածը, դարձած է կամուրջը երկինքի ու երկրի:

Հայոց համար տարբեր տեղ ունի Աստուածամայրը: Սուրբ Կոյսի անունով նուիրուած բազմաթիւ եկեղեցիները, շարականները, աղօթքները, տօները կը վկայեն այս մասին:

Սուրբ Կոյս Աստուածածնի պատկերները զարդարած են եւ օրինաբեր ներկայութիւն դարձած են հայ օճախներուն մէջ: Յաճախ աղօթքներով հայցած ենք Տիրամօր մայրական պաշտպանութիւնն ու միջնորդութիւնը:

Այսօրուան աշխարհին մէջ Սուրբ Մարիամը կը շարունակէ ոգեշնչել եւ առաջնորդել հաւատացեալները: Իր խոնարհութեան, հնազանդութեան եւ անխորտակ հաւատքի օրինակը կը ներկայացնէ ժամանակաւոր տիպար մը հաւատացեալներուն համար, որոնք կ'անցնին ժամանակակից կեանքի բարդութիւններէն: Իր մայրական գթութիւնը կը մխիթարէ եւ կը յուսադրէ բոլորիս, յիշեցնելով՝ Աստուծոյ անպարագրելի սէրն ու խնամքը:

Ինդրենք Աստուածամօր բարեխօսութիւնը եւ իր տիպարը դարձնենք մեր կեանքի օրինակը:

Հայր Յակոբ

ՈՍԿԵՂԷՆ ՀԱՄԱՐ

«Տէրը պիտի գովաբանեմ. ահա հոգիս կ'ուրախանայ Աստուծով, իմ Փրկիչովս, որովհետեւ ան տեսաւ իր աղախինին հեզութիւնը: Ասկէ ետք բոլոր սերունդները երանի պիտի տան ինձի, քանի հզօրն Աստուած ինձի համար մեծամեծ գործեր կատարեց. սուրբ է անունը անոր»: (Ղուկաս 1.46-49)

“My soul magnifies the Lord, and my spirit has rejoiced in God my For He has regarded the lowly state of His maidservant; For behold, henceforth all generations will call me blessed. For He who is mighty has done great things for me, and holy is His name.” (Luke 1:46-49)





ՄԵՐ ՀԱՅՐԵՐԸ ԿԸ ԽՕՍԻՆ

ՄՐԲՈՒԹԻՒՆՆ ՈՒ ԱՆԱՐԱՏՈՒԹԻՒՆԸ (ՄԱՔՐՈՒԹԻՒՆԸ) (ԲԱԺԻՆ Դ.)

«Այս քարոզը մանրամասնորեն կը սորվեցնէ, թէ սրբութեամբ, անարարութեամբ եւ մաքրութեամբ հոգին ինչպէս պէտք է ձգտի դէպի իր Տէրը, այսինքն՝ դէպի աշխարհի փրկիչը՝ Յիսուս Քրիստոս: Քարոզը նաեւ յարութեան արեւն մարմիններու պարզած վիճակին, չարին, ազար կամքին եւ մարդկային բնութեան ու պարհիւն մասին կարգ մը շինիչ խօսքեր կը բովանդակէ»:

Կարարելութեան հասածները եւ Սալոնայի պատերազմները

17.- Հարցում.- Արդեօք կատարելութեան հասածներն ալ կ'ենթարկուին դժուարութիւններու եւ պատերազմներու, թէ ամբողջովին գերծ կը մնան մտահոգութիւններէ եւ մտավախութիւններէ:

Պատասխան.- Թշնամին բնաւ չի դադրիր պատերազմել: Սատանան անգութ է, ծայր աստիճան կ'ատէ մարդը, եւ այդ պատճառով ալ ան բնաւ չի դադրիր մարդոց դէմ պատերազմել: Սակայն յստակ է, թէ ան բոլորին վրայ նոյն կերպով չի յարձակիր:

Պալատական իշխաններն ու ազնուականները իրենց տուրքը կայսեր կը վճարեն: Եւ այդ դիրքին վրայ եղողը իր առատ եկամուտէն կը վճարէ առասնց դոյզն իսկ ազդուելու կամ վնաս կրելու: Այն անձը, որ ողորմութիւն կու տայ, երբեք այնպէս չ'զգար թէ ան կը վնասէ: Նոյնպէս ալ Սատանան այս երեւոյթը՝ ոմանց վրայ չարձակիլը յաւելեալ առատութիւն մը կը համարէ եւ ոչ թէ վտանգ կամ վնաս: Բայց կրնայ շատ աղքատ մարդ մը ըլլալ, նոյնիսկ առօրեայ իր կենսական պէտքերէն զրկուած, իր տուրքերը չկարենալ վճարելուն պատճառով ան ծեծի ու չարչարանքի կ'ենթարկուի եւ իր ժամանակը կ'անցընէ շարունակ կրկնուող հարուածներն ու ոտնձգութիւնները համբերութեամբ տանելով ու կրելով: Բայց այդ բոլորով հանդերձ, ան կը տոկայ եւ չի մեռնիր: Մինչ ուրիշ մը, գլուխը կտրուելու հրաման արձակուելով, անմիջապէս կը կորսուի: Ոմանք դառնորէն յարձակումներու կ'ենթարկուին եւ մեղքերու յորձանուտներուն մէջ կը տարուբերին, սակայն հաւատքի մէջ աւելի կը հաստատուին եւ պատերազմելու համար յաւելեալ իմաստութիւն եւ ճկունութիւն ձեռք կը ձգեն: Անոնք կ'արհամարհեն չարին զօրութիւնը եւ այդ կողմէ չարին ենթակայ չեն ըլլար, որովհետեւ պաշտպանուած կ'ըլլան ինչպէ՛ս եւ արթուն կերպով կը հսկեն՝ հասնելու համար իրենց փրկութեան: Քանի որ անոնք երկար ժամանակ պատերազմի ճամբով մարզուեցան՝ դէմ դնելու մեղքին ու չարին, լայն փորձառութիւն ձեռք ձգեցին, եւ Աստուծոյ ներկայութեան արժանացած ըլլալուն համար, Իրմով է, որ կ'առաջնորդուին եւ խաղաղութեան մէջ կ'ըլլան:

ՀՈԳԵՒՈՐ ՔԱՐՈՉՆԵՐ
Մեծն Սուրբ Մակար
(Հայացուց՝ Մակար Արք. Աշգարեան)
(Շարունակելի 6)

ԱՐԲԱՏԱՄ՝ ԺՈՂՈՎՈՒՐԴՆԵՐՈՒ ՆԱԽԱՀԱՅՐԸ

Աբրահամ անունով բարի մարդ մը կար:
Իր օրերուն բոլորն ալ բազմաթիւ աստուածներ կը պաշտէին. Ինք միակն էր, որ կը հնազանդէր մէկ Աստուծոյ:
Աստուած զինք իր բարեկամը կոչեց, եւ օր մը ըսաւ.
- Հեռացի՛ր այս երկրէն եւ գնա՛ այն երկիրը, զոր ես քեզի ցոյց պիտի տամ: Քեզ օրհնելով բազում ժողովուրդներու հայր պիտի դարձնեմ:

Աբրահամ հնազանդեցաւ Տիրոջ խօսքին, եւ իր կնոջ՝ Սառայի հետ ճամբայ ելաւ:

Աբրահամն ու Սառան իրենց յառաջացած տարիքին զաւակ մը ունեցան, եւ զայն կոչեցին Իսահակ:

Աբրահամ մինչեւ վերջ հնազանդ գտնուեցաւ Աստուծոյ: Այս պատճառով Աստուած իրեն ըսաւ.
- Օրհնելով պիտի օրհնեմ քեզ. երկնքի աստղերու չափ եւ ծովու աազի չափ պիտի բազմացնեմ քու սերունդներդ:

ԳԱՆԱՏԱՅԻ ՀԱՅՈՑ ԹԵՄԻ
ԿԻՐԱԿՆՕՐԵԱՅ ԴՊՐՈՑԻ
ԱՇԿԵՐՏԻՆ ԳՐՔՈՅԿ

THE BOOK OF THE ACTS OF THE APOSTLES


WRITTEN: AROUND AD85-90

WHAT YOU NEED TO KNOW:

The Acts of the Apostles is the incredible story of how the church started. It records how, after Jesus went into heaven, the Holy Spirit came and equipped the small group of his followers. This small group soon bloomed into thousands, and people's lives were transformed for ever. Through the events recorded in Acts we see the apostles (Jesus' original disciples) and other followers of Jesus spreading the good news, sharing their stories and founding churches. Life was made difficult for the early believers by people from both Jewish and non-Jewish backgrounds. Many of the Christians were put to death (such as Stephen in chapter 7), yet people continued to share the news about Jesus and the church continued to grow.

WHY READ IT?

Acts describes loads of amazing things, including the selfless nature of the early believers and their perseverance against all the odds. It shows that the Holy Spirit is active in changing lives, and that Jesus is worth giving everything for. Acts tells us how the church started – so this book is part of your story too.



THE BOOK OF DEUTERONOMY

WRITTEN: PROBABLY 800-500BC


(USING STORIES FROM A MUCH EARLIER TIME)

WHAT YOU NEED TO KNOW:

Deuteronomy is a record of three big sermons given by Moses to a new generation of Israelites who were preparing to enter the Promised Land. The first is found in chapters 1-4 and is about how the Israelites' disobedience led to their wandering in the desert; it teaches the importance of obedience. The second sermon is found in chapters 5-26 and is about the commandments and the law. The third in chapters 29-33 and is a reminder of God's blessings; it also describes how a new leader, Joshua, is to take over from Moses.

WHY READ IT?

Deuteronomy shows us the last words of Moses before he dies, and in it we see much more about God's tenderness and care than in the other first books of the Bible. We know that God disciplines us and wants us to live correctly, but Moses teaches that this is because he loves us and wants what is best for us.





ԱՌԱՎԿՍ ԶԻՆՉ ՑՈՒՑԱՆԷ...

ԽՈՒՇԵՆ ԼՈՒՆԵՆԻՆ

Անփորձ տունկ մը նոնենիին կը հարցնէ.

- Ինչո՞ւ այդքան առատ կը ծաղկիս եւ ապա կը խոնարհիս ու կը կախուիս: Լոնենին կ'ըսէ.

- Երկրագործը ազահ է, իսկ ես՝ նրբոստ եւ ծանրապտուտ: Եթէ ճիւղերս կակուղ չըլլան, չեմ կրնար այսչափ բեռնատրուիլ [եւ դիմանալ], որով չկտրուելու համար կը կախուիմ:

Այս առակը կը յանդիմանէ գանոնք, որոնք Աստուծոյ տուածէն աւելի կը պահանջեն իրենց հաւատարմ ծառաներէն, որոնց հոգ պիտի տանի, որ ուժասպառ չըլլան ու չփճանան:

Մխիթար Գոշ

MERCY

[...] The quality of having mercy in your heart to give away keeps you focused on what you are for, rather than what you are against. For example, rather than becoming immobilized by your anger at what you are against, such as starvation, you put your attention on what you are for, which is to educate and feed people, thus your compassion leads you to a loving solution rather than an angry reaction. The mercy you feel in your heart toward those you love in your own circle or family will similarly keep you focused on compassion rather than reprisal, on rectifying the affront than exacting a retribution. As Shakespeare says in this inspiring piece, mercy is "mightiest in the mightiest." That is, the more powerful you are as a person, the more power you will display through your mercy, and the less need you will have to display your symbols of authority. Put the ideas of this passage by one of the world's greatest wordsmiths into your life by practicing the following:

When you find yourself facing a situation in which you are going to apportion justice, see the two sides of your own personality very clearly. The one side is the king who has the power of retribution, the other side is the mercy merchant who sends love and compassion first and foremost. By all means seek justice, but season it well with mercy.

Give yourself the compassion you deserve for any and all past actions. Stop judging yourself harshly. All those errors and wrong actions were necessary for you to get beyond that place in your life. Be kind to yourself and eliminate any ill feelings you harbor toward yourself.

Once you have stated how you feel, and justice has been done, then let go. I mean let go now! Don't hold on to grudges and use constant reminders to keep others in a state of guilt while maintaining your own dissonance as well. Let it go.

Turn your most troublesome disturbances over to God. Simply say, "Dear God, I find it so extremely difficult to give mercy in this situation, and I am turning it over to you completely. I know you will guide me in acting in the most merciful and humane way." This action will free you from your own immobilization and anger and help you to see the saint in the sinner, who have just been exchanging notes with each other.

WISDOM OF THE AGES
WAYNE W. DYER

ՀԱՅ ԵԿԵՂԵՑԻՈՅ ԺԱՄԵՐԳՈՒԹԻՒՆՆԵՐԸ

Քրիստոնէական եկեղեցոյ մէջ ժամանակի ընթացքին սկսան կազմակերպուիլ գանազան ժամերու նուիրում արարողութիւններ:

Հայ եկեղեցոյ ներկայ ժամակարգութեան մէջ գոյութիւն ունին եօթը անջատ ժամերգութիւններ, որոնցմէ իւրաքանչիւրը կը կատարուի օրուան որոշեալ ժամերուն:

Այսպէս.-

1. ԳԻՇԵՐԱՅԻՆ ԺԱՄԵՐԳՈՒԹԻՒՆ

Այս ժամերգութիւնը անցեալին կը կատարուէր կէս գիշերէն ետք լուսաբացէն առաջ, (իսկ հիմա՝ առաւօտուն), խնդրելով Հօր Աստուծմէ, որ Աստանայական փորձութիւններէ պահէ պահպանէ մեզ բոլորս եւ մնացեալ գիշերը խաղաղութեամբ անցնէ՝ արժանի դարձնելով մեզ առաւօտեան լոյսը տեսնելու:

2. ԱՌԱՒՕՏԵԱՆ ԺԱՄԵՐԳՈՒԹԻՒՆ

Այս ժամերգութիւնը կը կատարուի առաւօտուն: Բացուող արշալոյսին հետ մեր աղօթքը կ'ուղղենք մեր Փրկչին՝ Յիսուս Քրիստոսի, որով իր հրաշալի Յարութեան օրը, նոյն պահուն էր որ երեւցաւ իր մարմինը օծելու եկող Իղաբեր Կիներուն (Մատթէոս 28.1, 9-10):

3. ԱՐԵՒԱԳԱԼԻ ԺԱՄԵՐԳՈՒԹԻՒՆ

Այս ժամերգութիւնը այսօր կը կատարուի Քառասնօրեայ Մեծ Պահքի ընթացքին, եւ ուղղուած է Ա. Հոգիին եւ Քրիստոսի Յարութեանը, երբ երեւցաւ իր աշակերտներուն (Յովհաննէս 20.19-29):

4. ԾԱՇՈՒ ԺԱՄԵՐԳՈՒԹԻՒՆ

Այս ժամերգութիւնը բաղկացած է երեք կարճ ժամերգութիւններէ, որոնք նախապէս առանձին-առանձին կը կատարուէին, իսկ հիմա միասնաբար կը կատարուին: Անոնք են.

գ ԵՐՐՈՐԴ ԺԱՄ (կը համապատասխանէ առտուան ժամը 9:00-ին): Այս ժամուն մեր աղօթքը կ'ուղղենք Ա. Հոգիին, եւ կը յիշատակենք նախամայր Եայի դրախտին մէջ արգիլեալ պտուղի ճաշակելը եւ Յիսուսի միջոցաւ ազատութեան շնորհումը:

գ ՎԵՑԵՐՈՐԴ ԺԱՄ (կը համապատասխանէ կէսօրուան ժամը 12:00-ին): Այս ժամուն մեր աղօթքը կ'ուղղենք Հօր Աստուծոյ, յիշատակելով Յիսուսի խաչելութիւնն ու չարչարանքը:

գ ԻՆՆԵՐՈՐԴ ԺԱՄ (կը համապատասխանէ յետ միջօրէի ժամը 3:00-ին): Այս ժամուն մեր աղօթքը կ'ուղղենք Որդի Աստուծոյ, յիշատակելով անոր մահն ու հոգին ասանդելը:

5. ԵՐԵԿՈՅԵԱՆ ԺԱՄԵՐԳՈՒԹԻՒՆ

Այս ժամերգութիւնը կը կատարուի ամէն օր, ինչպէս անունէն ալ կ'երեւի՝ երեկոյեան ժամուն, եւ կը յիշատակէ մեր Տիրոջ Յիսուս Քրիստոսի խաչէն վար առնուիլը, ճերմակ կտաւով պատանքուիլը եւ գերեզմանին մէջ դրուիլը (Մարկոս 15.42-46):

6. ԽԱՂԱՂԱԿԱՆ ԺԱՄԵՐԳՈՒԹԻՒՆ

Այս ժամերգութիւնը ընդհանրապէս կը կատարուի Քառասնօրեայ Մեծ Պահքի շրջանին, փոխարինելով Երեկոյեան ժամերգութիւնը: Ուղղուած է Ա. Հոգիին, ինչպէս նաեւ Աստուծոյ Բանին՝ Յիսուս Քրիստոսի, որ գերեզման դրուելէ ետք դժոխք իջաւ եւ այնտեղ քարոզեց հոգիներուն (Ա. Պետրոսի 4.6):

7. ՀԱՆԳՍԵԱՆ ԺԱՄԵՐԳՈՒԹԻՒՆ

Քառասնօրեայ Մեծ Պահքի շրջանին յատուկ այս ժամերգութիւնը կը կատարուի արեւնամուտէն յետոյ, քնանալէ առաջ: Ուղղուած է Հօր Աստուծոյ, խնդրելով իրմէ՝ որ իր Միածին Որդիին Ա. Աջովը պահէ մեզ գիշերային խաւարէն ու սարսափէն:

(Շարունակելի 5)

Տաթև Աւագ Քահանայ Միքայէլեան

ԱՂՕԹՔ ՀՈԳԻԻ ԱՐՁՆՈՒԹԵԱՆ

Աստուած իմ, յիշեցնի՛ր զբաղած եւ մոռացկոտ մտքիս քու ահաւոր եւ սուկալի դատաստանդ, արդարներուն պատին ու փառքը եւ մեղաւորներուն աններելի տանջանքները, հաստատէ՛ քու երկիւղովդ եւ զարհուրեցնելով դողացնի՛ր իմ մարմինս, որ իմ աչքերուս առջեւ հանապազ տեսնեմ ահը ու պայծառանամ առաքինի վարքով:

ԱՄԷՆ:

PRAYER

Holy Father, who hast called us by the name of thine Only begotten and hast enlightened us through the baptism of the spiritual font, make us worthy to receive this holy mystery for the remission of our sins. Impress upon us the graces of thy Holy Spirit, as thou didst upon the holy apostles, who tasted thereof and became the cleansers of the whole world.

